ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք 22 սեպտեմբեր 2023թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ՝

Վարդան Ավագյանը
Աստղիկ Բաբայանը
Արշավիր Բայաթյանը
Ծովինար Հովհաննիսյանը
Նեկտար Հովհաննիսյանը
Կարեն Մանասերյանը
Դավիթ Մովսիսյանը
Եղիշե Նազարյանը
Մուշեղ Ներսիսյանը
Գրիգոր Սարգսյանը
Էմիլ Սարգսյանը
Ծովինար Սարգսյանը
Ռոմիկ Վարդանյանը

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Սոնա Մարգարյանը, Թամարա Մկրտչյանը, Տիգրան Նազարյանը, Մարատ Շահբազյանը, Սամվել Ոսկանյանը, Արմեն Վարդանյանը և Վահե Վարդանյանը:

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյան և համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Անի Հասրաթյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նստաշրջանի՝ սեպտեմբերի 22-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:

3) Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

4) «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում հայտարարված դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության հայտը հաստատելու, ներդրում կատարելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

5) Ճապոնիայի դեսպանության կողմից իրականացվող դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության հայտը հաստատելու, ներդրում կատարելու և ծրագրի շրջանակներում գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը անշարժ գույք նվիրաբերելու մասին:

7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ թիվ 43-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

8) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները սահմանելու մասին:

9) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները սահմանելու մասին:

10) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 25-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

11) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում աղբի հավաքման և փոխադրման համար թույլտվություն տրամադրելու պայմաններն ու կարգը հաստատելու մասին:

12) Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողի գործառնական նշանակությունը փոփոխելու մասին:

13) Համայնքային սեփականություն հանդիսացող հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

14) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

15) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու մասին:

16) Հողի նպատակային նշանակությունը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին:

17) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին.

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ, 43-րդ կետերը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2023 թվականի տարեկան բյուջեի՝

1) 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից հատկացնել դրամական օգնություն՝

ա. համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին՝ համաձայն հավելվածի,

բ. Գլաձոր բնակավայրի բնակիչ Կարեն Սամվելի Վարդանյանի ընտանիքին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

գ. Գլաձոր բնակավայրի բնակիչ Վիգեն Սամվելի Ալեքսանյանի ընտանիքին՝ 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

դ. Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Էդգար Մելսիկի Մխիթարյանին՝ 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ,

ե. տարեցների օրվա կապակցությամբ՝ Եղեգնաձոր բնակավայրի բնակիչ Արտավազդ Համբարձումի Ավագյանին (ընտանիքի անդամ՝ Գեղանուշ Գառնիկի Ավագյան) և Վերնաշեն բնակավայրի բնակիչ Գեղեցիկ Սարգիսի Բաբայանին (ընտանիքի անդամ՝ Արսեն Նարդոսի Դավթյան) 40 000-ական (քառասուն հազար) ՀՀ դրամ.

2) 02.05.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ հատկացնել հայ-ադրբեջանական սահմանագոտում տեղակայված մարտական դիրքում հակառակորդի արձակած կրակոցից զոհված զինծառայող Վանիկ Արամի Ղազարյանի ընտանիքին (Գետափ բնակավայր):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 26-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումը.

1) Պակասեցնել գործառնական դասակարգման՝

ա. 11.1.2 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 3 672 500 (երեք միլիոն վեց հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,

բ. 10.7.1 (սոցիալական հատուկ արտոնություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4726 (հուղարկավորության նպաստներ բյուջեից) հոդվածից 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2) Ավելացնել գործառնական դասակարգման՝

ա. 01.1.1 (օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4221 (ներքին գործուղումներ) հոդվածին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

բ. 05.1.1 (աղբահանում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ՝ աղբատար ավտոմեքենայի համար ճնշումային գազի բալոն ձեռք բերելու նպատակով,

գ. 04.5.1 (ճանապարհային տրանսպորտ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4269 (հատուկ նպատակային այլ նյութեր) հոդվածին 150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ճանապարհային նշագծման ներկ ձեռք բերելու նպատակով,

դ. 05.6.1 (շրջակա միջավայրի պաշտպանություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածին 57 500 (հիսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ՝ դեռատիզացիոն աշխատանքների իրականացման նպատակով,

ե. 09.1.1 (նախադպրոցական կրթություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4637 (ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածին 2 285 000 (երկու միլիոն երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ անկողնային պարագաների, աղբամանի և արևային կայանների համար հաշվիչների ձեռբերման նպատակով,

զ. 02.05.01 (պաշտպանություն) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

է. 10.7.1 (սոցիալական հատուկ արտոնություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ը. 04.2.4 (ոռոգման համակարգի կառուցում և վերանորոգում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին 230 000 (երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ն/

Լսեցին.

«ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՏԵՂԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 25-րդ և 42-րդ կետերի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից իրականացվող «Լավ կառավարում հանուն տեղական զարգացման Հարավային Կովկասում» ծրագրի շրջանակներում գործադրվող՝ ՀՀ համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման դրամաշնորհային հիմնադրամի միջոցով ՀՀ համայնքներում ՄԱԿ-ի կայուն զարգացման 2030 օրակարգի և կայուն զարգացման նպատակների տեղայնացմանն ուղղված դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության հայտը (ծրագիր)՝

«ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Անդրանիկի փողոցի ոռոգման ցանցի կառուցում և Խանջյան փողոցի ոռոգման ցանցի վերանորոգում»:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում՝ համայնքի բյուջեից կատարել ներդրում 2 129 000 (երկու միլիոն մեկ հարյուր իններսուն հազար) ՀՀ դրամի չափով:

3. Սույն որոշման առաջին կետում նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրում նախատեսվող աշխատանքների համար գումար ստանալու նպատակով համայնքի բյուջեում (գործառնական դասակարգման 04.02.04 ոլորտ) արտաբյուջետային հաշիվ բացելու համար տալ համաձայնություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին.

ՃԱՊՈՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ և ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. <u>ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 25-րդ և 42-րդ կետերի, 92-րդ հոդվածի 4-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Ճապոնիայի դեսպանության կողմից իրականացվող Grassroots Human Security Projects (GGP)/մարդկային անվտանգության «Grassroots» դրամաշնորհային մրցույթին Եղեգնաձոր համայնքի մասնակցության հայտը (ծրագիր)՝

«Եղեգնաձոր համայնքի Մալիշկա և Գետափ բնակավայրերի ոռոգման ցանցերի վերակառուցում»:

2. Սույն որոշման առաջին կետում նշված ծրագրի շրջանակներում՝ համայնքի բյուջեից կատարել ներդրում 5 940 024 (հինգ միլիոն ինը հարյուր քառասուն հազար քսանչորս) ՀՀ դրամի չափով:

3. Սույն որոշման առաջին կետում նշված դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա և Գետափ բնակավայրերում նախատեսվող աշխատանքների համար գումար ստանալու նպատակով համայնքի բյուջեում (գործառնական դասակարգման 04.02.04 ոլորտ) արտաբյուջետային հաշիվ բացելու համար տալ համաձայնություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, քննարկելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2023 թվականի հուլիսի 26-ի N ՊՆ/510-ԳՔ/4534-2023 գրությունը, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր քաղաքի Մոմիկի փողոց 1-ին նրբանցք 7 հասցեում գտնվող 0.0658 հա բնակելի կառուցապատման հողը և 907.99 քմ մակերեսով բազմաբնակարան շենքը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07072023-10-0019) նվիրաբերել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝ բնակարանները զինծառայողներին տրամադրելու նպատակով:

2. Առաջարկել Եղեգնաձոր համայնքի ղեկավարին՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:

3. Նվիրաբերության պայմանագրի կնքման, պայմանագրից բխող պետական գրանցման և այլ վճարներն՝ ամբողջությամբ ենթակա են վճարման նոր սեփականատիրոջ կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի ԹԻՎ ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ղեկավարի 2022 թվականի ապրիլի 5-ի՝ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 138-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՎԱՅՐԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-ին կետի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ն/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՄԱՆԸ (ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ) ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտները (կարաոկե, դիսկոտեկ, հեստապարային ակումբ, բաղնիք, շոգեբաղնիք, սաունա, մերսման սրահ) կարող են տեղակայվել բազմաբնակարան շենքի բնակելի և (կամ) ոչ բնակելի տարածքներից, բնակելի տներից, կրթական և պատմամշակութային հաստատություններից, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, բժշկական հաստատությունների տարածքներից նվազագույնը 500 մետր հեռավորության վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ն/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ, ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-Ի N 15 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետի և 84-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, 102-րդ հոդվածի 4-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հավելվածի 2.9-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 25-ի՝ «Համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը հաստատելու մասին» N 15 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ն/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՂԲԻ ՀԱՎԱՔՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասով **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի տարածքում աղբի հավաքման և փոխադրման համար թույլտվություն տրամադրելու պայմաններն ու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ն/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՈՂԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ, 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և Վայոց ձորի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 11-ի N 01/06-1-2/6255-2023 գրությամբ ներկայացված՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի դրական կարծիքը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Սպանդարյան փողոց 40/3 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 2.2446 հա մակերեսով ընդհանուր օգտագործման հողի (կադաստրային ծածկագիր՝ 10-001-0025-0001) գործառնական նշանակությունը փոփոխել՝ դարձնելով հասարակական կառուցապատման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և այն հանգամանքը, որ նշված հողատեսքը ընդգրկված է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն՝ համայնքային սեփականություն հանդիսացող, Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.27 հա մակերեսով արոտավայր հողատեսքը (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0128-0060) խոտհարք հողատեսքի փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի 19-րդ փողոց, 11-րդ փակուղի, 2/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության 0.04521 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-014-0118-) մակերեսով բնակելի կառուցապատման հողը և Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության 0.12798 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-042-0034-0004) մակերեսով վարելահողը ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և ժառանգ Արմենուհի Մուսիկյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի 47-րդ փողոց, 1 հասցեում գտնվող, հանգուցյալ Լարետ Հայրիկի Մուսիկյանին հատկացված, շինությամբ ծանրաբեռնված, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների 0.01074 հա մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողի նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման փոխելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել՝ 2023 թվականի հոկտեմբերի 13-ը, ժամը 18:00-ն, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-11	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Արձանագրվում է, որ օրակարգի 6-ից 17-րդ հարցերի քննարկման և քվեարկության ժամանակ՝ համայնքի ավագանու անդամներ Մուշեղ Ներսիսյանը և Կարեն Մանասերյանը ներկա չէին:

Ներկա ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը _____